

Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցի  
Հաղորդագրութիւն

Յարգելի Թորոնթոնայ,

Գանատահայութեան վերջին մէկ քանի տարիներու հրատապ նիւթը եղած է՝  
Գանատական Թեմի մը հաստատման հարցը:

1975 ի առաջին ամիսներուն, այդ առնչուելով Գանատահայ երեք ծուխեր անդամա-  
կան ժողովներու որոշումով, Առաջնորդի միջոցաւ, Վեհափառ Հայրապետին դիմում  
կատարել փափաքած էին՝ Գանատական Թեմի հաստատումը խնդրելով:

Խնդրանքը պաշտօնապէս Ս. Էջմիածին չէ դրկուած եւ Մոնթրէալի ու Ս. Եր-  
րորդութիւն Եկեղեցւոյ պատգամաւորները 1978ի պատգամաւորական ժողովին, առանց  
իրենց անդամական ժողովներէն հրահանգուած ըլլալու, Թեմի հաստատման դէմ  
արտայայտուած են:

25 Փետրուար 1979ին, Մոնթրէալի անդամական ժողովը Թեմի հաստատման համար  
անգամ մը եւս որոշում անցուցած է եւ այդ խնդրանքը Առաջնորդարանի կողմէ  
Վեհափառ Հայրապետին ուղղարկուած պէտք է ըլլար:

Վեհափառ Հայրապետը, այս տարուայ Մարտ ամսուայ սկիզբը Ս. Էջմիածին  
գտնուող Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանին հրահանգած է, մինչեւ երեք ամիս,  
Թեմի հաստատման համար պէտք եղած աշխատութիւնները կատարել: Նորին Արքագնութե-  
ան կ'ընկերանար Հոգ. Տ. Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեան:

30 Մարտ 1979 օր Ս. Էջմիածին հասած զոյգ հետազիրներով, թէ թեմակալ  
Առաջնորդը եւ թէ թեմական Խորհուրդը Թեմի բաժանման հարցին իրենց հաւանութիւնը  
յայտնած են: Այսպէսով տարիներէ ի վեր ձգձգուող այս հարցը ի վերջոյ դրական  
փուլի մը մտած է: Այս լուրը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Վազգէն Ա.  
հաւատարիմ ըլլոր Գանատահայերու սիրտը ցնծութեամբ լեցուցած է:

Ցաւով կ'իմանանք, թէ կարգ մը անձեր՝ Վեհափառ Հայրապետի հրահանգին,  
Թեմական իշխանութեան հաւանութեան եւ Գանատահայութեան ջանքերից մեծամաս-  
նութեան փափաքին հակառակ, տակաւին Թեմի հաստատման դէմ կ'արտայայտուին:

Կը յուսանք որ մեր սիրելի եղբայրները եւ քոյրերը ողջմտութեամբ կը  
զգաստանան:

Թորոնթոնայութիւնը շահաբորբող Գանատական Թեմի հաստատման առնչուելով կայ  
նիւթ մը եւս, Թորոնթոնի երկրորդ ծուխը՝ Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցին:

16 Դեկտեմբեր 1976 թուակիր եւ 25032 թիւ նամակով, թեմակալ Առաջնորդ  
Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան այդ շրջանի Առաջնորդի Փոխանորդ Գեր. Տ. Արիս  
Եսս. Շիրվանեանի կը հրահանգէր Թորոնթոնի մէջ երկրորդ ծուխ մը հաստատել:  
1977ի վերջին օրերուն նշանակուած ծիական Խորհուրդը, 1978ի առաջին օրերուն,  
առանց պատճառարանութեան լուծուեցաւ: Այդ թուականէն վերջ ոչ մէկ մարմին  
երկրորդ ծուխը կազմելու աշխատութիւններուն ձեռնարկեց:

Թորոնթոնայ 13 ազգայիններ, երկրորդ ծուխի անհրաժեշտութեան հաւատալով  
եւ Առաջնորդ Արքագանի հրահանգը իրագործելու մտքը, 8 Յուլիս 1978 թուականին  
Առաջնորդարան երթալով Առաջնորդ Արքագանի հետ տեսակցութիւն մը ունեցան:

նորին Սրբազնութեան թելադրանքով, 21 Յուլիս 1978 թուակիր դիմումնաքրով մը կազմուած ծուխի ճանաչումը խնդրուեցաւ:

Այդ թուականէն վերջ, հնչալէս էր թեմի հարցին պարագային, այս հարցն ալ գանազան փուլերէ անցաւ: Փոխանակ կազմուած ծուխը ճանաչում գտնելու, Սրբապորոյի Հայաստանեայց Եկեղեցի՝ անունով նոր ծուխ մը կազմելու օանքերը եղան:

Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցւոյ ծխական Խորհուրդը իր անդամներուն ճնշումին ենթարկուելով, Գեր. Տ. Արիս Եպս. Շիրվանեանի առաջարկեց ծուխին հոգեւոր մատակարարի արժամեայ պաշտօնը ստանցնել: Սրբազանը եղած խնդրանքին ընդառաջելով, 11 Փետրուար 1979 թուականէն սկսեալ Ս. Պատարագները սկսան:

ժողովուրդի խանդավառութիւնը աներեւակայելի էր եւ քարոյական ու նիւթական օժանդակութիւնը անսահման:

Թորոնթոյի եւ Գանատայի տագնապալից հարցերուն մասին խորհրդակցելու համար Վեհափառ Հայրապետը երբ Արիս Սրբազանը Մայր Աթոռ հրաուհրեց, Վեհափառ Հայրապետի զիտակցութեամբ եւ հաւանութեամբ երեք պատուիրակներ Արիս Սրբազանի ընկերակցեցան:

Պատուիրակութիւնը թէ Վեհափառ Հայրապետէն եւ թէ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամներէն շատ սիրալիւր ընդունելութիւն գտաւ: Իրենց ի պատիւ պաշտօնական ճաշկերոյթներ տրուեցան, ուր նոյն ինքն Վեհափառ Հայրապետը ներկայ գտնուեցաւ:

Պատուիրակութիւնը պաշտօնական ժողովներ ունեցաւ Վեհափառ Հայրապետի եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամներուն հետ:

Պատուիրակութեան ներկայացուցած առաջարկ-խնդրանքները, Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ գումարուած Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի 31 Մարտ 1979 օրուայ ժողովին քննարկուեցան:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի կողմէ պատուիրակութեան տրուած 2 Ապրիլ 1979 թուակիր եւ 259 թիւ պատասխանին մէջ ծուխիս առնններ հետեւեալը կը կարդանք.

Սրբապատար Երկրորդ Եկեղեցական մի համայնքի ստեղծումը եւ ճանաչումը անյետաձգելի անհրաժեշտութիւն է անշուշտ:

Հետեւաբար Վեհափառ Հայրապետի իղծն է եւ որոշումը, որ Թորոնթոյի նոր համայնքի կազմակերպումը եւ ճանաչումը կատարուի նիւ-եորքի թեմական իշխանութեան տնօրէնութեամբ այժմից իսկ, այսինքն Կանադայի անկախ թեմի ստեղծումից առաջ, որի համար օրինական սլայման է, որ նոր համայնքի անունով ցարդ կատարուող սուրբ պատարագի եւ ծիսական բոլոր արարողութիւնները ժամանակաւոր կերպով դադարեցուեն յառաջիկայ Ապրիլի 15-ից յետոյ, եւ նորին Սրբութիւնը համապատասխան հրահանգը տայ թեմակալ առաջնորդին, որպէսզի ճանաչում տրուի նոր համայնքին եւ նշանակուի ծիսակատար հոգեւոր հովիւ ընդ իշխանութեան այժմու առաջնորդական փոխանորդի, մինչեւ նոր թեմի հոշակումը:

Իսկ Վեհափառ Հայրապետի կողմէ Հոգ. Տ. Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեանի դրկուած հեռագրին մէջ կը կարդանք.

Մի քանի ամիսէն, Գանատայի անկախ Ռեմի հռչակումը պիտի կատարուի Հայրապետական կոնգրակով, Թորգոմ Արք.ի առաջադրանքով: Այժմ անհրաժեշտ է գրադիր Ս. Խաչ համայնքը կազմակերպել ձեր իշխանութեանը ներքեւ, Թորգոմ Արք.ի ցուցմունքներով. շատ լաւ կ'ըլլայ հոգեւոր հովիւ մը նշանակէք ձեզի ենթակայ. կը վստահինք ձեր իմաստութեան, լայնախոհութեան եւ շինարար եռանդին. այժմ անոնք տրամադիր են անցեալը մոռնալու եւ ձեր շուրջ հաւարուելու: ՚՚

Վերոյիշեալ տուեալներու լոյսին տակ, կը յուսանք թէ՛ մամուլի մէջ անհիմն արտայայտութիւններ ունեցող խումբ մը անձեր այլեւս Վեհափառ Հայրապետի հիդ ու հրահանգներուն դէմ գրելէ կը դադրին:

Գաղութիս մէջ սէր եւ համերաշխութիւնը վերահաստատելու մտօք, կոչ կ'ուղղենք բոլոր Թորոնթոնայ մեր քոյր եւ եղբայրներուն, այժմէն իսկ հնազանդի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրահանգներուն:

Շնորհաւոր Ս. Զատիկ:

15 Մարտ 1979

Եխական Խորհուրդ  
Ս. Խաչ Հայց. Նկեղեցւոյ